

Վ.ԱՂԻՄԻՐ ՎԼԱԴԻՄԻՐԻ ՊԱՊՈՅԱՆ  
(Ծննդյան 60-ամյակի առթիվ)



Լրացավ ԵՊՀ-ի ֆիզիկայի ֆակուլտետի տեսական ֆիզիկայի ամբիոնի պրոֆեսոր, ֆիզիկա-մաթեմատիկական գիտությունների դոկտոր Վ.Վ. Պապոյանի ծննդյան 60 և գիտամանկավարժական գործունեության 35-ամյակը:

Վ.Վ. Պապոյանը ծնվել է 1937թ. հոկտեմբերի 17-ին Թիֆլիսում: Միջնակարգ կրթությունը ստացել է Երևանի Չերժինսկու անվան դպրոցում, որն ավարտել է ոսկե մեդալով 1955թ.: 1960թ. ավարտել է ԵՊՀ-ի ֆիզիկայի ֆակուլտետը և նույն թվականին ընդունվել է Հայաստանի ԳԱ ֆիզիկա-տեխնիկական լաբորատորիա աշխատանքի: 1961-1963թթ. սովորել է ասպիրանտուրայում, միաժամանակ դասավանդելով ֆիզիկայի ֆակուլտետում, իսկ 1964-ից աշխատում է տեսական ֆիզիկայի ամբիոնում՝ սկզբում որպես ասիստենտ, ապա դոցենտ, իսկ

այժմ պրոֆեսոր: Նրա ամբողջ գործունեությունը նվիրված է ձգողականության տեսության ուսումնասիրությանը:

Վ. Պապոյանը աշխատում է ակադեմիկոս Գ. Սահակյանի կողմից ղեկավարվող խմբում, որը 1967թ. սկսած ուսումնասիրում էր պտտվող աստղերի հավասարակշռության և կայունության հարցերը: Այդ աշխատանքների հիման վրա աշխարհում առաջին անգամ ստացվել էին իներցիայի մոմենտների արժեքները տարբեր հավասարակշիռ աստղային մոդելների համար: Այդ հետազոտությունները թույլ տվեցին հաշվելու գերխիտ պտտվող աստղային մոդելների մակրոսկոպիկ պարամետրերը պոլյարների հայտնագործման նախօրյակին (1968թ.): Շուտով պարզվեց, որ պոլյարները փաստորեն նույնացվում են պտտվող բարիոնային աստղերին: Այդ աշխատանքների համար Վ.Վ. Պապոյանին, Դ. Մ. Սեդրակյանին և Է. Վ. Չուբարյանին շնորհվեց Հայաստանի կոմերիտմիության դափնեկրի պատվավոր կոչումը, իսկ 1969թ. նա պաշտպանեց թեկնածուական ատենախոսությունը: Հետագայում այդ ուղղությամբ աշխատանքները շարունակվեցին, զարգացվեց աստղային մոդելների կայունությունը ուսումնասիրելու մեթոդը և կատարվեցին համապատասխան թվային հաշիվներ:

Վ. Պապոյանի մանկավարժական գործունեությունը սկսվել է 1961թ.: Տարիներ շարունակ նա դասավանդում է «Դասական մեխանիկա», «Էլեկտրադինամիկա», «Հոծ միջավայրի ֆիզիկա», «Վեկտորական և տենզորական անալիզ», «Մոլիտոնների մեթոդը գրավիտացիայում» ընդհանուր և հատուկ դասընթացները: Վերջին տարիներին նա հիմնականում աշխատում է հատուկ խմբերի հետ և սիրված ու հարգված դասախոս է: Պապոյանի ակտիվ և մարդամոտ բնավորությունը ժամանակին արտահայտվեց նաև նրա հասարակական գործունեության մեջ:

Ութսունական թվականներին սկսվեց Պապոյանի գիտական կենսագրության երկրորդ փուլը: Եռանդուն ուսումնասիրությունները ձգողականության տենզոբա-սկալյար տեսության շրջանակներում հանգեցրին հետաքրքիր արդյունքների, և 1990թ. նա պաշտպանեց դոկտորական ատենախոսությունը: Նույն թվականներին հաստատվեցին կապեր Դուբնայի Միջուկային հետազոտությունների միացյալ ինս-տիտուտի տեսական ֆիզիկայի լաբորատորիայի հետ: Ուստի վերջին տարիներին Պապոյանը տարվա որոշակի մասը աշխատում է այնտեղ, իսկ 1993թ-ից ՄՀՄԻ-ի գի-տական խորհրդի անդամ է: Եթե դոկտորական ատենախոսության խնդիրները կապ-ված սկալյար դաշտի առկայության հետ հիմնականում ներկայացնում էին ակադեմի-ական հետաքրքրություն, ապա ներկա աշխատանքներում, որոնք մասամբ կատար-վում են Դուբնայում, ցույց է տրվում սկալյար դաշտի կարևոր դերը կոսմոլոգիայի խնդիրներում, մասնավորապես, կապված վաղ Տիեզերքի զարգացման հետ: Վերջին հինգ տարիներին գիտնականը տպագրել է 32 աշխատանք, որոնցից մի քանիսը ար-տասահմանյան ամսագրերում: Այդ աշխատանքների համար ԱՄՆ-ի կենսագրական ինստիտուտը Վ.Վ. Պապոյանին շնորհեց «1997 տարվա մարդ» կոչումը:

Վ. Պապոյանը բազմիցս հանդես է եկել ձգողականության և ռելյատիվիստական աստղաֆիզիկայի հարցերին նվիրված համամիութենական և միջազգային կոնֆե-րանսներում: 1974թ-ին նա ստաժավորվել է Բոլոնիայի համալսարանում (Իտալիա), 1983թ. աշխատել է Տեխասի համալսարանում (ԱՄՆ): Կարճատև գործուղումները Գերմանիա և Լեհաստան նույնպես եղել են քեղմնավոր:

Վ. Պապոյանը հեղինակ է 100-ից ավելի գիտական աշխատանքների: Նա Երևա-նի համալսարանի տեսական ֆիզիկայի ամբիոնին կից դոկտորական ատենախոսու-թյունների պաշտպանության մասնագիտական խորհրդի անդամ է, ինչպես նաև ԵՊՀ-ի ֆիզիկայի ֆակուլտետի գիտական խորհրդի անդամ:

Ամբիոնի աշխատակիցների և բազմաթիվ գործընկերների անունից շնորհավո-րում ենք Վ.Վ. Պապոյանի ծննդյան 60-ամյակը և ցանկանում նրան քաջառողջու-թյուն, ստեղծագործական անսպառ եռանդ:

Է.ՉՈՒԲԱՐՅԱՆ, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, տեսական ֆիզիկայի ամբիոնի վարիչ,  
Ռ. ԱՎԱԳՅԱՆ, տեսական ֆիզիկայի ամբիոնի պրոֆեսոր,  
Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ, տեսական ֆիզիկայի ամբիոնի դոցենտ